ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2013թ. թիվ 280-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 167-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 04.11.2013թ. թիվ 2359գրությունը՝

Որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. օգոստոսի 31-ի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 167-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1. Հավելվածի «Թերապևտիկ հիվանդություններ» մասը լրացնել նոր՝ 18-րդ տողով.

18	Հիվանդությունների ամբուլատոր բուժում	25 000

2. Հավելվածը «Ընդհանուր վիրաբուժական վիրահատություններ» մասից հետո լրացնել նոր՝ «Պլաստիկ վերականգնողական վիրաբուժություն և միկրովիրաբուժություն» մասով՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. նոյեմբերի 8
ք.Վանաձոր